

ՅԱՎԵԼՎԱԾ

«Մ Ա Կ Բ Ե Թ»

**Թարգմանություն
Մելքոն ԿՅՈՒՐՃՅԱՆԻ**

**Տեսչություն ապագրության պատրաստեց
ՍՈՒԱ ՍԵՅԵՐՅԱՆԻ**

«Մակրեթը» Շերտպիրի «Համլետ», «Օթելլո» և «Վենետիկի վաճառականը» գործերից հետո հայերն ամենաշատ թարգմանված ողբերգություններից է:

Հայունի են «Մակրեթի» հետեւյալ թարգմանությունները:

1864 թվականին Վենետիկում փորձ է արվել թարգմանելու և բեմադրելու «Մակրեթը», սա ներկայացվել է գպտոցական թատրոնում: Պահպանված հրավիրագիր-ազգի մեջ համառոտակի տրված է ողբերգության բովանդակությունը: Հեղինակի և թարգմանչի անունները նշված չեն հայտադրի մեջ: Ներսես Տեր-Ներսիսյանի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այն կատարվել է Գյուտի Փրանսերեն թարգմանությունից:

1866 թվականին Պոլսի Սկյուտարի ճեմարանի առաջիկ Ուղուրիկյանը, բայց երեսութիւն վերջին գտարանում, թարգմանում է «Մակրեթը», սակայն չի հրատարակվում:

1877 թվականին Վենետիկի «Բազմավեպում» ամբողջությամբ տպադրվում է «Մակրեթը» գրաքար: Թարգմանիչն էր Միխիթարյան միաբան Արիստակես Կասկանդիլյանը, որը կրամ ստորագրում էր՝ Ղանտաղի:

Արամ Թարայանը նշում է «Մակրեթի» մի թարգմանչի անուն ևս: Դա համիզյան բանակալության տարիներին Կափիորնիա տեղափոխված և բնակություն հաստատած ուսուցիչ Մ. Ա. Մելքոնն է, որը, Շիլլերի երկերից բացի, թարգմանել է Շեթպիրի «Հռւլիս Կևարը», «Մակրեթը», «Համլետը», «Օթելլոն» և «Վենետիկի վաճառականը»: Դրժանակարար, զրանք չեն հրատարակվել և հայտնի չեն, թե որտե՞ղ են ձեռագրերը և ընդհանրապես պահպանվել են:

1892 թվականին Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը լույս է ընծայում Ստեփանոս Մալասյանի թարգմանությունը:

1922 թվականին Վենետիկում տպագրվում է Հովհաննես Մասնէշյանի «Մակրեթը»:

Գրականության և արվեստի թանգարանում, Մելքոն Կյուրձյանի արթիվում, վերջերս հայտնվեց «Մակրեթի» հատվածարար մի թարգմանություն:

Մելքոն Կյուրձյանը (զրական ծածկանուն է Հրանտ) ծնվել է 1859 թվականին Բալուի Հավապ գուղում: Նախնական կրթությունն ստացել է իր ծննդավայրում: 1870 թվականին մեկնել է Պոլիս: Ուսանել է Սկյուտարի ճեմարանում, ապա՝ Սուրբ Խաչ վարժարանում: 1878—1896 թթ. գրադլում է ուսուցչությամբ, դասավանդում հայոց լեզու գրաքար և աշխարհարար: Ապա 1879—1881 թթ. պաշտոնավարում է Ռոդություի ազգային վարժարանում որպես տնօրին:

1896 թվականին Պոլսի կոտորածների ժամանակ հետապնդվում է կառավարության կողմից: 1893 թվականին մեկ ամսով ձերբակալված լինելով, համարվում էր կասկածելի անձ: Այս անգամ Կյուրձյանին հաջողվում է խույս տալ Վառնա, ուր օրիորդ Արմենու-

Հի Մինասյանի հետ հրմնում է Արծրունյան վարժարանը գաղթական երեխաների համար:

Ուշաբություն շաբաթներով բարեկամների թախանձանքին, 1898 թվականին վերադառնում է Պոլիս, կարծելով, թե խստությունները մեղմացած են: Բայց անմիջապես ձերբակալվում է, Վեց ամիս անց աքսորվում է Գասթիլմունի և 10 տարի մնում այնտեղ՝ Ամեն օր ներկայանում է ոստիկանատուն, հատուկ տեսրի մեջ դնելով իր ստորագրությունը: Արգելված էր նրան ուսուցչությամբ գրադվել, կամ բաղաքից հեռանալու Սակայն դադար տարվա ընթացքում ուսումնական է ավանդում մի խումբ բժիշկների և բժշկության ուսանողների:

Տարը տարվա ընթացքում ուսումնասիրում է զգականություն և գրադվում թարգմանությամբ Սովորում է անդեմին:

1908 թվականին Սահմանադրության հոչակումից հետո նրան թուլարարվում է վերադառնալ Պոլիս: Պաշտոնավարում է տարրեր վարժարաններում: 1910 թվականին այցելում է Էջմիածին: 1915 թվականի ապրիլի 15-ին, ինչպես պոլսահայ շատ մտավորականներ, ձերքակալվում է և աքսորվում Ալյաշի բանտու:

Կյուրցյանի դրական և հրապարակախոսական աշխատանքները սկսվել են 1883 թվականից, երբ պաշտոնավարում էր Պոլսու թաղային վարժարանում: Լինելով թունդ դրաբարյան, թարգմանությունների մեծ մասը գրարարով է կատարել: 1884 թվականի հունվարից հրատարակում է «Եկեղեցեր» օրաթերթը:

Նրան են պատկանում հետեւյալ թարգմանությունները. «Վերը Հայաստանի»-ի առաջին և երկրորդ մասը վերածել է արևմտահայերենի: Յրանսերենից թարգմանել է Ալֆրեդ Պը Վինդիի «Գայլի մահը» պատմվածքը, Կոռնելիի «Սերը և «Հին սերեր» գործերը, Ռունանի «Հիսուսի կյանքը» վեպը: Խուզարկությունների ժամանակ ոստիկանությունը բռնադրվում է նրա ձեռագրերը, ուստի շատ դորձեր ամբողջական չեն: Միայն «Հիսուսի կյանքն» է լրիվ պահպանվել:

«Մակրեթը» նույնպես կիսատ է: Հավանաբար Կյուրցյանը նախընտրել է թարգմանել իրեն առավել դուր եկած հատվածները: Դրանք են Մակրեթի, Բանքոյի, լեդի Մակրեթի մենախոսություններն ու երկխոսությունները: Հատվածները հաջորդական չեն, շատ գեղքերում վեցված է մենախոսությունից մի մաս:

Թարգմանության թվականը նշված չէ Կյուրցյանի տեսրում: Ամենայն հավանականությամբ այն կատարվել է աքսորում անցկացրած տասը տարիների ընթացքում (1898—1908):

Այս անգամ Կյուրցյանը հրաժարվում է իր նախասիրած գրարարից և դիմում աշխարհաբարին, միաձուկելով արևմտահայերենն ու արևելահայերենը: Թարգմանությունը տողացի է, արծակ: Կյուրցյանը չի շեղվել ընագրից, և, ինչպես ընդունված է ասել, գերադասել է արծակ տողացի թարգմանությունը վատ շափածոյից:

Սակայն թարգմանության լեզուն հղկված չէ, խոսքը հստակ չէ, քերականորեն անհարթ, կան նաև բարբառային ձևեր: Ակնհայտ է, որ սա սոսկ սեագիրն է, անմշակ, ձեռագիր վիճակում:

Ահա Կյուրցյանի թարգմանությունը¹:

1 ԳԱԹ. Մելքոն Կյուրցյանի արխիվ, № 33:

Մակրեք — Երկիրն ունի պղպջակներ. ինչպէս ունի՛ նույնն և ջուրը:

Սորա նման են ներանք, բայց ո՞ւր ներանք անհետացան,
Բանքո — Օդին մեջ: Մարմնավոր նրանց տեսիլը հուշերու.

Ինչպէս մի շունչ հողմին մեջ: Բայց ո՞ւր էր թե մնալին:

* * *

Բանքո — Եվ հաճախ դեպի կորուստ մեղ որսալու նպատակով՝

Ճշմարտություն են խոսում մեղ դժոխքի գործիքներն,

Հրապուրում են ազնիվ, չնչին բաներով և կործանում

Ներյուրանքի անդունդին մեջ:

* * *

Իրական մեր երկյուղն

Ավելի թույլ է լինում, քան երկյուղի մտապատկերն:

Իմ խորհուրդս սպանության մասին թեպետ լոկ մի ցնորք,

Այրությունս այն աստիճան է ցնցեցնում, որ իմ բոլոր

Կենսական ուժս երազների մեջ է մաշվում. և ոչինչ

Չկա բացի ոչնչից:

* * *

Մակրեք — Նա իշխան՝ Կումբերլանտի: Գայթակղության սա է դեմ,

Որից ես կը սայթաքեմ, եթե միշից չվերցնեմ: —

Ճանապարհիս մեջտեղում ընկած է նա: Մածկեցե՛ք

Զեր լուսն, աստղեր, ոև ու խորոնկ կամք մը լուսավորեք:

Աշքեր, կյանքիս մի՛ նայեք, թույլ տվեք, որ կատարվի

Այն, որ եթե կատարվի՝ աշքը նայել կը զարհուրի:

Լեդի Մակրեք —

Բարեկամ ձեւացիր

Աշքով, լեզվով ու ձեռքով անմեղ թվիր, ինչպէս ծաղիկ,

Բայց ներքելից օձ պահիր:

* * *

Բանքո —

Ամառնալին այս հյուրը,

Տաճարաբնակ ծիծեռնակն, յուր սիրելի ներկայությամբ

Ցույց է տալիս, թե երկնքի հյուրասներ է շունչն այստեղ:

Ո՞ւ մի կամար կամ առաստաղ, ո՞ւ մի սյուն կամ անկյուն
Ազատ չկան, ուր այս թոշոնը շնչյուսեր իր ճոճացող
Բուլյնիկն ու ձագերով լի օրորոցն: Նկատել եմ,
Որտեղ որ նա թուխս նստի ու բնակի՝ այնտեղ միշտ
Մաքուր է օդն:

Բ. Ա. Ր Ա. Ր Վ. Ա. Ծ

Մակրեր— Դաշո՞ւլն է արդյոք այս, որ տեսնում եմ իմ առաջ,
Երախակալն ինձ զարնված: Ե՞կ, թո՞ղ որ քեզ բռնեմ:—
Զերքումս ես քեզ շոմեմ, սակայն շարունակ տեսնում եմ քեզ:
Մի՞թե դու, օրհասական երևութ, զգալի շե՞ս
Նույնպես ձեռքի, ինչպես աշքի, կամ միթե՞ն դու դաշույն ես
Երևակայության համար, մի խարդախ արարած,
Որ առաջ ես եկել իմ բորբոքված ուղեղից:
Ես գեռմս տեսնում եմ քեզ, թող որքան շոշափելի,
Որշափ այս, որ ես ահա զուրս եմ քաշում պատյանից:
Դու ինձ ուղղում ես այն շավիդն, ուր ես ուզում եմ ոտք դնել:
Եվ այսպիսի մի գործիք փնտրում էի գործածելու:—
Խեղկատակ դալկուն աշքերս մյուս զգայարանքներս,
Կամ ավելի ունեն արժեք. քեզ տեսնում եմ ես գեռնս,
Եվ սայրիդ ու դանակիդ վրա արյան կաթիլներ,
Որ առաջ շկային: Ո՞ւ, ոչինչ այնտեղ շկա.
Սա միայն արյունալից այն գործն է, որ խարում է
Իմ աշքերս: Կես աշխարհի համար այժմ բնությունը
Մեռած է թվում և խոլական երազներ անկողնի մեջ
Ահարեկում են քունը:

Մակրեր— Կարծես լսում էի, որ գոշում էր մեկն. «Էլ մի՛ քնեք,
Մակրեթ քունն սպանում է, անմեղ քունը, այն քունը,
Որ հոգսերի կնճռուտած կծիկը բա՛ց է անում,
Ամենօրյա կյանքի մահը, ժանր հոգնության բաղանիքը,
Վիրավոր սրտերի տենչն հզոր բնության երկրորդ քայլը,
Գլխավոր կերակորը այս կյանքի խնջուքին մեջ»:
Լեդի Մակրեր— Դու այդ ի՞նչ ես մտածում:
Մակրեր— Բոլոր տան մեջ նա գոշում է միշտ. «Այլևս մի՛ քնիր,
Գլումիսը քունն սպանեց, սորա համար և Կավղորն
Այլևս պիտի չքնի. Մակրեթն այլևս չքնի»:

Անդի Մակրեր — Բայց ո՞վ էր որ այդպիս գոշում էր. Ո՞վ իմ հարգելի թենք,
Կու մերկացնում ևս քո սովոր զորությունը գործերի վրա
Այդպիս հիմանդ մտածմունքներ անելով: Գնա՞ , ջուր առ,
Եվ լվա՛ ձեռներից այդ զաղիր վկացությունն:
Ինչու համար այս զաշույններն հետդ բերիր այնտեղից:
Այնտեղ, այնտեղ դիր դրանք, ետ տար դրանք և քսիր
Քունն եղած ծառաներին վրա արյուն:

Մակրեր— է՛լ շեմ գնա: Զարհութում եմ խորհելիս, թե ի՞նչ բան զործեցի:
Կրկին տեսնել նրան—ես այդ շեմ կարող:
Լեղի Մակրեր— Թուլասի՞րտ:
Դաշույններն ինձ տուր, քնածն ու մեռածը ովինչ են,
Քուն պատկերներ, և միայն երեխայի աշքերն են
Որ վախում են նկարված սատանայից: Եթե արյունն
Հոսում է՝ զեռ՝ կոսկեզօծեմ ծառաներին երեսներն,
Եվ հանցանքը կը համարվի՝ նրանցը: (Գնում է, դուռը դրսից
բախում են)

Մակրեր— ի՞նչ դռան զարկ է:
Այս ի՞նչ զարկոց: Ամեն մի ձայն սարսափի թերում է վրաս:
Ի՞նչ ձեռներ են այս: Հը՝ Խոտորում են նոքա աշբերս:
Պոսիտոնի օվկիանոսն այս արյունը կլվա՞,
Կը մաքրի՞ իմ ձեռներից: Ո՞ւ, մանավանդ այս ձեռներս
Անհուն ծովերն ծիրանի գույն կներկեն և կը փոխեն
Զրերի կանաչ գույնը կարմիրի: (Լ. Մակրեթ կրկին ներս է
մտնում)

Աղա այժմ
իմ ձեռներս էլ քոնի նման կարմրացան, բայց ամոթ էր՝
ես քեզ պես ճերմակ սիրտ ունենայի: (Դուռը բախում են)
Լսում եմ,
Հարավային դուռն են բախում: Քաշվենք գնանք մեր սենյակը.
Փոքր ինչ ջուր մեղանից կը լվանա այս գործը.
Որչափ դյուրին կը լինի այս: Քո հոգու ծանրությունն
Քեզ թողեց բոլորովին:

三三三

Զգգացված ցավակցություն հայտնելը՝ մի պաշտոն է Խարդախին համար դյուրիին:—

* * *

Դաշույն կա ժամաներին տակ: Մարդ որչափ մոտ է արյան
Արյունաբրու է այնչափ:

* * *

Արձակված սպանիչներն
Դեռևս գերին չեն ընկել, Մեզ համար ապահով է
Նպատակ զառնալուց խույս տալ:

* * *

Հեռանանք շուտով, Պետք է մարդ իր անձը գողանա
Փրկե այնտեղ, ուր մարդկային քնքուշ գութ էլ չկա:

Ժամացուցով

Առավոտ է, բայց մութ գիշերն դեռ խեղում է շրջող լապտերն:
Հաղթանակն է գիշերի, թե ցերեկի ամոթն է սա,
Որ խավարը ծածկել է երկրի ճակատն, երբ սրան
Կենդանի լույսն համբուրել է կամենում:

* * *

Մակրեք— Այո, դուք ցանկին մեջ նշանակված եք իբրև մարդ.
Ինչպես նաև բարակ, որսկան, քոթոթ, գամփո, ընթացիկ,
Բակի շոմը, զրի շոմը և հոտի շոմը—բոլոր սոքա
Շուն են կոշկում, և միայն աստիճանի ցուցակը
Որոշում է՝ ո՞րն է արագ, ո՞րը գանդաղ, ո՞րը ճարպիկ,
Տուն պահպանող և որսորդ, և այսպես յուրաքանչյուրն
Իր ձիրքերին նայելով, որ բարեգութ բնությունն
Ամփոփել է նորա մեջ, որով սոքա ընդունում են
Իրենց հատուկ կոշումներ բացի ցանկից՝ որ մինին
Նույն անունով է գրում: Նույն է նաև մարդու հետ:
Եթե դուք տեղ եք բռնում այդ ընտրելյաց ցանկի մեջ,
Եվ ո՞չ թե մարդկության մեջ վերջին տեղը՝ խոսեցեք.
Եվ ըստ այնմ ես ձեր սրտում մի այնպիսի գործ կտամ,
Որ նորա կատարումը ձեր թշնամուն ի բաց վանե,
Եվ մեր սրտին քեզ պինդ ու պինդ կազատե:
Եթե նա ապրելիս՝ վիրավորում է մեր հանգիստն,
Ուրեմն կառողանա նորա մահով:

Բ. Մարդասպան—

Մի մարդ եմ,

Տեր իմ, որին աշխարհի խորամիտ ծեծն ու հարվածները
Այն աստիճան են բորբոքել, որ անփույթ եմ ինչ էլ գործեմ՝
Աշխարհը ծաղը անելու համար:

Ա. մարդասպան—

Իսկ ես մի ուրիշն,

Դժբախտությամբ անշափ ցնցված և խարխլված ճակատագրից՝
Որ պատրաստ եմ դրանք ենթարկել որևէ զորավարի՝
Որ կամ այն բարելավեմ կամ ազատվեմ:

Մակրեր— Այժմ երկուքդ էլ իմացաք, որ Բանկո ձեզ թշնամի է:

* * *

Մակրեր— Արիություն է վայելում ձեր աշքերում: Ես մի ժամից
Ձեղ ցուց կտամ, թե ո՞րտեղ դարանի պիտի կանգնեք,
Կը բացատրեմ ձեզ նաև հարմարավոր ժամանակն.

Ակնթարթն իսկ:— Պետք է սա հենց այս գիշեր կատարվի,
Եվ պալատից փոքր ինչ հեռու: Դուք հիշում եք իմ ասածս.
Որ կասկածի ես շեմ ուղում ենթարկել: Եվ նորա հետ—
Որպեսզի զործում շմնա, ո՞չ ճանաշող, ո՞չ կարկտան:
Թող Ֆիլիս ևս, նորա որդին, որ ուղեկցում է նորան,
Եվ որի կորուստը ինձ ոչ պակաս է կարևոր
Քան նորա հորն՝ թող նա ևս խավարային այն ժամատ
Ճակատագրին ենթարկվի: Վճռեցեք ուրեմն շուտով.
Ես հենց հիմա կդառնամ:

* * *

Լեդի Մակրեր— Դեռ ոչինչ ձեռք չերված՝ ամեն բան խաբեռթյուն,
Մեր բաղձանքը կատարված, բայց չկա անդորրություն,
Լավ է լինել այն, որ մենք կարծում էինք, քան շարումակ
Երկուղախտոն ուրախության կործանումի կասկածի տակ:
(Մակրեթը ներս է մտնում):

Ի՞նչ նոր բան կա, իմ ամուսին: Ինչո՞ւ լինում ես միայնակ
Եվ ընտրում քեզ ուղեկից՝ տիրեցուցիչ պատկերներն,
Որոճում ես խորհուրդներ, որ մեռնեին պետք է վաղուց
Նորա հետ, որի մասին են խորհում: Անդառնալի
Գործը պետք չէ էլ զննել: Պատահածը պատահած է:

Մակրեր— Օձը միայն վիրավորվեց, բայց մենք նրան չսպանեցինք.
Նա կողջանա և կդառնա նույնը. և մեր շարության

Նա դարձյալ կսպառնա յուր թունավոր ատամով:
Բայց թող քանդվի շենքը երկրի, թող կործանվի երկու աշխարհ՝
Քան մեր նույն ահ ու դողի մեջ ուտենք և քան լինենք
Այս սոսկալի երազների ճնշումի տակ, որ գերեցին
Մեղ ցնցումի մեջ: Լավ է այս մեռածին մոտ լինել,
Որին հանգիստ պարզեցինք, որ ինքներս էլ գտնենք հանդիստ,
Քան թէ պառկենք մենք հոգու տանջարանին վրա,
Մտահոյզ տանջանքներում: Դադաղի մեջ է Դունկան.
Անցավ նորա կյանքի շերմը և նա քնում է հանգիստ,
Դավին իր բոլոր չարիքը նորան հասցրեց: Ո՞չ սուր, ո՞չ թույն,
Ո՞չ ընտանի սոսկությունն, ո՞չ օտարի հարձակմունքն—
Ոչինչ նրան էլ չէ կարող տրվի:

Անդի Մակրեք— Գնա՞նք, իմ ամուսին

Փարատիր խորշումները երեսիդ, խնդումներես
Եվ ուրախ եղիր գիշերս հյուրերիդ հետ:

Մակրեք— Կաշխատեմ

Իմ սիրելիս, այնպես եղիր, խնդրեմ, դու էլ բոլոր ուշքը
Բանկոյի վրա դարձրու, հայացքով ու խոսքերով
Պատվիր նրան կրկնակի: Քանի որ դու ապահով շենք,
Պետք է լվանք մեր պատիվն՝ շողոքորթող վտանգներով:
Եվ մեր դեմքերն դիմակ շինենք սրտերիս, ու կեղծելով
Սածկենք, թե ի՞նչ են նոքա:

Մակրեք— Ուրեմն ուրախ եղիր դու, առաջ քան թե չղջիկը

Յուր մենավոր թոփշը կը կատարի և Հեկատի

Կոչերուն՝ եղջուրաթիւ... բգեզը յուր քնարեր

Բզզանքով կհնչեցնե մելամաղձու գիշերաժամն՝

Մի ահեղ գործողություն կը կատարվի:

Մակրեք— Մեր երկյուղը Բանկոյից

Խոհն է. Նորա արքայական բնության մեջ տիրում է ուժ՝

Որ մեզ երկյուղ է ազդում: Նա շատ բարձր ձգտում ունի,

Եվ բացի անընկճելի դյուժազնական արությունից՝

Խոհեմություն ունի նա, յուր քաջության ղեկավար

Դեպ ապահով բանսարկություն: Նորանից շար ոչ ոք չկա,

Որի ես գոյությունից վախենամ, և նորա մոտ

Ճնշվում է իմ հոգին նման, ինչպես ասում են՝

Անտոնիոս Մարկոսին Կեսարի մոտ: Հանդիմանեց

Նա քույրերին, երբ սերանք նախ ինձ կոչեցին թագավոր,
Եվ պատվիրեց իրան համար էլ խոսել գուշակաբար,
Ներանք նրան ողջունեցին իրեւ հայր թագավորաց
Գոսացած թագով ներանք պսակեցին իմ զլուխս
Եվ իմ ձեռքս տվին անպտղաբեր Գայիսոն,
Որպես օտարացեղ մի ձեռք նրան հափշտակե
Եվ ես որդի շունենամ ինձ հաջորդող:
Ես իմ սիրտս աղտեղեցի Բանկոյի ցեղին համար,
Նորա համար մորթեցի առատաշնորհ Դունկանին,
Խղճի խայթ խառնեցի խաղաղության բաժակիս մեջ՝
Միմիայն նոցա համար Անմահական իմ թագս
Մարդկության ընդհանուր թշնամու ձեռքը մատնեցի,
Որ նոցա պսակեմ, պսակեմ Բանկոյի թագն:

* * *

Մակրեր — (ոգուն)

Մի թոթվի իմ վրաս քո արյունոտ գանգուրներդ

Լեղի Մակրեր —

Ի՞նչ ապրանք:

Սոքա միայն երեռւթներ են ձեր վախից առաջացած,
Սա զաշույնն է օդից քաշված, որ քեզ, ինչպես ինքներդ ասիք,
Դունկանի մոտ առաջնորդեց: Ահա, այս տեղերն, որ
սարսափիներն —

Ճիշտ երկյուղի կեղծ պատկերներ — սոքա համար են զալիս
Պառավական հերթիններին, որ ձմեռը վառարանի
Կշտին՝ մեծ-մայրն հեղինակեն: Ո՞հ, ձեզ ամոթ է այս: —
Ինչո՞ւ այսպես գոմում եք երերոն: Եվ վերջապես
Սա մի լոկ աթոռ է, որին այդպես նայում եք:

Մակրեր — Այստեղ նայի՛ր, տե՛ս, այնտեղ ահա: Այժմ ի՞նչ կասես դու
(Բանկոյի ոգուն)

Եթե մեզ զերեղմանն ու զամբարանն ետ են զարձնում
Թաղածներին՝ այն ժամանակ թող մեր շիրիմը լինի
Անզղների՝ որովայնը:

Լեղի Մակրեր —

Թեև՝ ամոթ:

Մակրեր — Թափկում էր արյունը նաև հին ժամանակ,
Երբ օրենքն ընկերական դեռ չէր հարթել խաղաղ կյանք:
Այո՛, նաև նրանից հետո պատահել են սպանություններ,

Ականջի զարհուրելի, Սակայն այն ժամանակներն՝
երբ գուշաք կտրվեր՝ մարդն էլ իսկուն կմեռներ,
եվ բանը կվերջանար: Այժմ նոքա՛ վեր են կենում
Դարձյալ, քսան մահացու վերք կրելով իրենց գլխին
եվ մեզ հալածում են աթոռից: Սա ավելի
Ահավոր է, քան այսպիսի սպանությունն,

* * *

Մակրեր—

(ողում)

Կորի՛ր աշխիցս, չքվի՛ր: Թող քեզ անդունդը պարտկե:
Ծուծ չկա ոսկորներիդ մեջ, պաղ է քո արյունը,
Տեսողություն էլ չունես աշխերիդ մեջ, որ այդպես
Սարսում ես:

(Ոգուն) Դարձյալ նույնը.

Մարդ ի՞նչ բանի համարձակվում է, ես էլ եմ համարձակվում:
Ե՞կ իմ վերաս Ռուսաստանի թավամազ արջի ձևով
Կամ զրահավոր ոնքեղջյուրի, ինչպես վագրը Հիրկանի
Ե՞կ, ինչ դեմքով կամենաս, բացի դրանից—իմ շղերս
Անհողդողդ էլ կենան, և վերստին կենդանացիր
Եվ հրավիրիր ինձ անապատ՝ քեզ հետ սրով կուելու
Եթե խուլս տամ քեզանից ահուդողով՝ ապա կոչիր
Ինձ աղջկա խաղալիք—կորի՛ր, ստվեր սոսկալիք:
Կորիր, ճիվա՛ղ, չքվիր:

Երեւոյթ—

Ոչ ոք երբեք

Որ կնոշից ծնված է՝ Մակրեթին չի վնասե:

Նույնը— Եղի՛ր գու առլուծամիրտ գոռող, և հոգ մի աներ՝

Ո՞վ է հուզվում, ո՞վ կատաղում, կամ ո՞վ կազմում է դավեր:
Վասնզի երբեք Մակրեթ չի հաղթվի մինչ այն վայրկյանն,
Որ Բիրնամի մեծ անտառը դեպի բարձր Դումսինան
Զշարժվի, յուր դեմ շրդա: (Խորասուզվում է):

Մակրեր—

Այդ երբեք լինելու չէ:

Ո՞վ կարող է բռնադատել անտառն, ծառին ո՞վ կստիպե
Երկրաբուն յուր արմատից հանվել: Գուշա՛կ քաղցր և բարի,
Ապստամբ գլուխ, երբեք մի՛ բարձրանա՛ր, մինչ Բիրնամի
Անտառը շբարձրանա:

Մակրեր—

Հերի՛ք, հանգի՛ր, խեղճ լապտեր.

Կյանքը լոկ թափառական ստվեր է. մի խեղճ գերասան,

Որ միգացած կատարում է իր ժամը բեմի վրա

Եվ հետո մոռացվում է հավիտյան; Խենթի պատմած

Մի հերիաթ է սա, զրված մեծ գոռում ու զոշումով,

Բայց որ զուրկ է իմաստից:

* * *

Սուրհանդակ— Երբ բլրի վրա ես կանգնած էի հսկողության

Եվ նայում թիրնամ ինձ այնպես երեցավ

Թե անտառը շարժվում էր:

Մակրեր— Ես ծաղրում եմ այն սուրբ, այն զենքերն արհամարհում,

Որ մորից ծնած մեկը ինձ դեմ է բարձրացնում:—